



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 2 Օգոստոս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 3 Օգոստոս. Սրբոց Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեքտասաներորդ Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 4 Օգոստոս. 2. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 9 Օգոստոս. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 10 Օգոստոս. Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Երեկոյեան, Վարդավառի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ապա կատարեց Քահանայական Ձեռնադրութեան Կոչումը Սուրբ Աթոռոյս Բարեշնորհ Գէորգ Սրկ. Անտոնեանի, Գրիգոր Սրկ. Թաքուշեանի եւ Աշոտ Սրկ. Ղազարեանի:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ «Հսկման» արարողութիւնները: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 11 Օգոստոս. Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան «Անդաստան»-ը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին Վրայ: Պատարագեց, քարոզեց եւ Սուրբ Աթոռոյս երեք Սարկաւագները ձեռնադրեց քահանայ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ձեռնադրիչ Սրբազան Հայրը Բարեշնորհ Գէորգ Սարկաւագ Անտոնեանը

անուանակոչեց Տէր Սեմովօֆէ ԱԲԵՂԱՅ, Գրիգոր Սարկաւագ Թաքուշեանը անուանակոչեց Տէր ՍԻՈՆ ԱԲԵՂԱՅ եւ Աշոտ Սարկաւագ Ղազարեանը անուանակոչեց Տէր ՍՈՒՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ:

Յետ Ս. Պատարագի ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ առնթերակայ Սրբազաններու կատարուեցաւ «Խաղողօրհնէք»ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 12 Օգոստոս. Յիշատակ մեռելոց: Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներու:

Առաւօտեան Միաբան Հայրեր մեկնեցան Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գրեգմանին վրայ մատուցուեցաւ ի Ս. Խաղ Ծ. Վրդ. Ճոննտուրեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն:

Շաբաթ, 17 Օգոստոս. Եփեսոսի Սուրբ Ժողովոյն Երկու Հարիւր Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 18 Օգոստոս. Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Ուրբաթ, 23 Օգոստոս. Նախատօնակին Ս. Յակոբեանց Մայր տաճարի՝ Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 24 Օգոստոս. Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարի ձախակողմը գտնուող Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կէսօրէ ետք Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր զխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ

եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կիրակի, 25 Օգոստոս.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեւ քարոզեց, ապա «Անդաստան»ի արարողութեան նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երկուշաբթի, 26 Օգոստոս.- Բ. օր Վերափոխման: Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ. Վրդ. Ծոնտուրեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 31 Օգոստոս.- Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 1 Սեպտեմբեր.- Ը. օր Վերափոխման: Տեսչական Ս. Պատարագը մատուցուեցաւ Աթոռի կարգէն՝ Ս. Յարութեան տաճարի վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածնի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ս. Պատարագը մատուցեց Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր.- Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի, ծնողացն Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Պատարագեց տաճարի տեսուչ Տ. Արտակ Աբղ. Տիւղէնեան:

Շաբաթ, 7 Սեպտեմբեր.- Սրբոց Առաքելոցն՝ Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 8 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Կորին Եպս. Բաղդասարեանի՝ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն նախորդ օրը տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

12-14 Սեպտեմբեր.- Քառասնօրեայ խորհրդածութեան շրջանը ամբողջացնելէն անմիջապէս ետք, ըստ աւագութեան կարգի, Նորընծայ հոգեւորականներն իրենց անդրանիկ Պատարագը մատուցին Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ խորանի վրայ եւ Գլխադիր մատրան մէջ:

Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր.- Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան՝ Աւագ խորանին վրայ:

Ուրբաթ, 13 Սեպտեմբեր.- Տ. Սիւն Աբղ. Թաքուշեան՝ Աւագ խորանին վրայ:

Շաբաթ, 14 Սեպտեմբեր.- Տ. Սուրէն Քհնյ Ղազարեան ի Ս. Գլխադիր:

Կիրակի, 15 Սեպտեմբեր.- Դ. Կիրակի զինի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարի Աւագ խորանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Նորընծաներու ուսուցիչ՝ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան, սպասարկութիւնը կատարեցին Նորընծաները:

Ուրբաթ, 20 Սեպտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 21 Սեպտեմբեր.- Ծնունդ Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեւ քարոզեց հանդիսապետ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 33-ամեակին առի-

թով:

Կիրակի, 22 Սեպտեմբեր.– Ե. Կիրակի զկնի վերափոխման: Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Շաբաթ, 28 Սեպտեմբեր.– Տօն եկեղեցւոյ ի նաւակատիւ Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիսադիր: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Խաչվերացի մեծահանգէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որ ապա Խաչափայտի Ս. Մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութեանց նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կիրակի, 29 Սեպտեմբեր.– Տօն վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան Մայր տաճարին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, Մայր տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանգէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր.– Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրլխադիր: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն Մեքոնեան ընտանիքի ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար:

Շաբաթ, 5 Հոկտեմբեր.– Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաքունեան:

Կիրակի, 6 Հոկտեմբեր.– Բ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր.– Ս. Գէորգայ նախա-

տօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Շաբաթ, 12 Հոկտեմբեր.– Սրբոցն՝ Գէորգայ Զօրավարին, Աղոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղրպտոց վանքի տեսչէն:

Կէսօրէ ետք, Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 13 Հոկտեմբեր.– Տօն Վարագայ Ս. Խաչին: Առաւօտեան ժամը 6:30-ին հանդիսապետութեամբ Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն ետք Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 19 Հոկտեմբեր.– Սրբոց Եօթնասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւիթը գտնուող՝ Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Խաչ Ծ. Վրդ. Զոննտուրեան:

Կիրակի, 20 Հոկտեմբեր.– Դ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը կատարուեցաւ նաեւ տարեկան ուխտագնացութիւն դէպի Ռամէի Ս. Գէորգայ վանք: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Ուրբաթ, 25 Հոկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 26 Հոկտեմբեր.– Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մով-

սիսի Քերթողին, Դավթի Անյաղթ Փրիստփային, Գրիգորի Նարեկացուն եւ Ներսիսի Կլայեցուն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Կիւլպէնկեան Մատենադարանի տեսուչ՝ Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 27 Հոկտեմբեր.– Ե. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Արշակ Աբդ. Ղազարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, նախագահութեամբ հանդիսապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ 1999-ի Հոկտեմբեր 27-ին ՀՀ ԱԺ-ի վրայ զինուած յարձակման հետեւանքով զոհուածներու հոգիներու հանգստութեան համար:

Շաբաթ, 2 Նոյեմբեր.– Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի գաւիթը գտնուող Հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնջ Ղազարեան:

Կիրակի, 3 Նոյեմբեր.– Զ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Երկուշաբթի, 4 Նոյեմբեր.– Սուրբ Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Պատարագեց Տ. Տիգրան Քհնջ Ոսկանեան:

Շաբաթ, 9 Նոյեմբեր.– Ս. Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան

Թափօրին հանդիսապետեց Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Կիրակի, 10 Նոյեմբեր.– Է. Կիրակի զկնի խաչի: Գիւտ Ս. խաչի: Առաւօտեան ժամը 5:30-ին, հանդիսապետութեամբ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն ետք, Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Երկրորդ մուտքին հանդիսապետեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ապա Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Յետ Սուրբ եւ Անմահ Պատարագի կատարուեցաւ մեծահանգէս Թափօր՝ նախ Գիւտ խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ Թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրին հանդիսապետեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ամպօղանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին:

«Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2024 տարւան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 16 Նոյեմբեր.– Ամենայն Սրբոց՝ հրնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 17 Նոյեմբեր.– Ը. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Ուրբաթ, 22 Նոյեմբեր.– Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 23 Նոյեմբեր.– Ս. Հրեշտակապետացըն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Ս. Հրեշտակապետաց Վանքի տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Աղանի Ճէվահիրճեանի եւ զաւակացն՝ Գրիգոր եւ Սիմէոն Մարգարեան եղբարց համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 24 Նոյեմբեր.– Թ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտա-

կապետաց: Ժամարարն էր Տ. Սիրոն Աբղ. Թաքուն-
շեան:

Շաբաթ, 30 Նոյեմբեր.- Ս. Առաքելոցն՝ Անդ-
րէի եւ Փիլիպպոսի: Յետ Առաւօտեան ժամերգու-
թեան, հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղ-
դասարեանի կատարուեցաւ ուխտագնացութիւն
դէպի հայոց Փիլիպպոսի աղբիւր:

Կիրակի, 1 Դեկտեմբեր.- Ժ. Կիրակի զկնի Խա-
չի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն
մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէո-
դորոս Եպս. Զաքարեան: Պատարագեց Տ. Արտէն
Քհնյ Աբրահամեան:

Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր.- Նախատօնակին
ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զա-
քարեան:

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր.- Ընծայումն
Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Թէոդորոս Եպս.
Զաքարեանի հանդիսապետութեամբ, Միաբան
Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի
պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին
Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գե-
րեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատար-
ագը մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ՝ Տ. Թէ-
ոդորոս Եպս. Զաքարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետու-
թեամբ Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեանի, կատար-
ուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն վասն հոգւոցն
Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ համայն ննջեցելոց Կիւլ-
պէնկեան գերդաստանի:

Շաբաթ, 7 Դեկտեմբեր.- Ս. Գրիգորի Աքան-
չեւագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւ-
ռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուե-
ցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս
Վրդ. Շէրպէթճեան:

Կիրակի, 8 Դեկտեմբեր.- Ա. Կիրակի Յիսնա-
կի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝
Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուա-
ծածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Խաղ Ծ. Վրդ.
Ճոնտուրեան:

Ուրբաթ, 13 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի
Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 14 Դեկտեմբեր.- Սրբոց Առաքելոց
եւ առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բար-
թոլղիմէոսի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլ-
խադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապե-
տեան:

Կիրակի, 15 Դեկտեմբեր.- Բ. Կիրակի Յիսնա-
կի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝
մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կո-
րիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Ար-
շակ Աբղ. Ղազարեան:

Շաբաթ, 21 Դեկտեմբեր.- Ս. Նիկողայոսի
Աքանչեւագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ
ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն
էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան: Վերաբերումը կատար-
ուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղա-
նին վրայէն:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի
Ս. Յակոբ նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդա-
սարեան:

Կիրակի, 22 Դեկտեմբեր.- Յղութիւն Ս. Աստ-
ւածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Կորիւն Եպս.
Բաղդասարեան Սրբազան Հօր հանդիսապետու-
թեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնե-
ցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով
մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր
օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր
Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց հանդի-
սապետ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Ուրբաթ, 27 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի
Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան
Հայրը:

Շաբաթ, 28 Դեկտեմբեր.- Ս. Յակոբայ Մըծ-
բընայ Հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին եւ Մե-
լիտոսի Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սերովբէ
Աբղ. Անտոնեան:

Կիրակի, 29 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնա-
կի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝
մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէո-
դորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ
Ծ. Վրդ. Մանկասարեան:

Պատրաստեց՝ ՍԻՈՆ ԱՔԵՂԱՅ ԹԱՔՈՒՇԵԱՆ